ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ / ARMENIAN RED CROSS SOCIETY

№ 335

«08» 05 2023 թ.

Սյունիքի մարզի Գորիսի համայնքապետ
պարոն Ա. Առուշանյանին

Հարգելի պարոն Առուշանյան,

Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) Գորիսի համայնքային մասնաճյուղը տեղակայված է ք. Գորիս Անկախության 3 հասցեում գտնվող համայնքապետարանի շենքի առաջին հարկում, Գորիսի համայնքապետարանի կողմից ՀԿԽԸ-ին անհատույց տրամադրված տարածքում, ինչը հնարավորություն է տվել կազմակերպել անձնակազմի և կամավորների կառավարումը, մշակել և իրականացնել համայնքի կարիքների վրա հիմնված մարդասիրական ծրագրեր, ինչպես նաև տրամադրել մարդասիրական և սոցիալ-հոգեբանական օգնություն: Սյունիք մարզային մասնաճյուղի և մասնավորապես Գորիսի համայնքային մասնաճյուղի կողմից իրականացրած գործունեությունը ներկայացված է ՀԿԽԸ պաշտոնական կայքում, որը պարբերաբար թարմացվում է:

Խնդրում եմ Ձեզ երկարաձգել նշված տարածքի անվարձահատույց օգտագործման պայմանագրի ժամկետը (որը ավարտվում է սույն թվականի մայիսին), ինչպես նաև հնարավորության դեպքում, տրամադրել ավելի ընդարձակ տարածք մասնաճյուղի աշխատանքները էլ ավելի արդյունավետ կազմակերպելու համար:

Շնորհակալություն համագործակցության համար

Հարգանքով՝

Աննա Եղիազարյան

Գործադիր տնօրեն

Հայկական Կարմիր խաչի ընկերություն
Armenian Red Cross Society
Պարոնյան 21/1 Paronyan,
Հայաստան, Երևան 0015, Yerevan, Armenia

www.redcross.am
redcross@redcross.am
Հեռ. / Tel.:(+374) 60 62 50 50

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՄԱՐԴԱՅԻՆ ԱՐԺԱՆԱՊԱՏՈՒԹՅՈՒՆԸ
«ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿ
ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ
ՄՏՄ 1723
11 05 2023 թ.